ԵԿԵՂԵՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԵԼԻՔՅԱՆ

Բանալի բառեր - Առաջին Հանրապետռություն, Խորհրդային Հայաստան, եկեղեցի, պետություն, իրավաքաղաքական կարգավորում, պատմական իրողություն, ժամանակաշրջան, պատմական նախադրյալներ:

Բոլոր ժամանակաշրջաններում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հիմնահարցը պահանջել է իրավաքաղաքական կարգավորում: Այդ փոխհարաբերությունների կարգավորման տեսանկյունից հետաքրքրական է ուսումնասիրել թե՛ Հայաստանի Առաջին Հանրապետության (այսուհետ՝ Առաջին հանրապետություն) և թե՛ Խորհրդային Հայաստանի իրավաքաղաքական մշակույթը: Առաջին հանրապետության պատմաքաղաքական նախադրյալները բարդ էին եկեղեցու հետ փոխհարաբերությունների կարգավորման տեսանկյունից մի շարք պատճառներով, ուստի 20-րդ դարում ծավալված պատմաքաղաքական իրադարձությունների մեջ առանձնացնենք այն կարևորագույն փաստական իրողություններն ու հանգամանքները, որոնք կարևորվում են եկեղեցի-պետություն փոխհարաբերության ներկա իրողությունները հասկանալու և պատմական հիմքն ըմբռնելու համար: Հատկանշական է այն հանգամանքը, որ Հայկական հարցի լուծման դիվանագիտական-քաղաքական ամբողջ պատասխանատվությունն այդ ժամանակահատվածում Եկեղեցին վերցրել էր իր վրա: 1912-ից Մայր աթոռ Ս. Էջմիածինը զգալի ջանքեր է գործադրել Հայ դատի խնդիրը բարձրացնելու համար:[1] Եվրոպական պետությունների ուշադրությունը Հայ դատի վրա սևեռելու նպատակով Գևորգ Ե Սուրենյանց Ամենայն հայոց կաթողիկոսը ստեղծել է Ազգային պատվիրակություն՝ հայտնի հայ հասարակական գործիչ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Ազգային պատվիրակության գործունեությունն ամբող-

[1] Հայ եկեղեցին Առաջին Աշխարհամարտի տարիներին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2003, 343 էջ:

ջությամբ կազմակերպվել, համաձայնեցվել և մասամբ ուղղորդվել է Մայր աթոռի կողմից և անմիջական մասնակցությամբ:[1]

Առաջին հանրապետության պատմական կարճատև գոյությունը կարևորագույն նվաճումներ է բերել նաև Եկեղեցու համար: Այդ շրջանում (1918–20) Հայ եկեղեցու իրավական կարգավիճակի ամրագրման և պետության մեջ նրա դերի բարձրացման հարցը դարձել է երկրի ղեկավարության ուշադրության առարկա: Այդ նպատակն է հետապնդել «Հայաստանյայց առաքելական Մայր եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք դաշնագրի նախագիծը» (12.2.1920), որը մնացել է անիրագործելի: Անկախ դրանից եկեղեցին անընդհատ կապի մեջ է գտնվել արտաքին աշխարհի հետ, ըստ էության երբեմն իր վրա վերցնելով երկրի դիվանագիտական հարաբերությունների և արտաքին քաղաքականության մի շարք գործառույթներ: Երբ նորաստեղծ պետությունը դեռևս ճանաչում և հայ ժողովրդի շահերը պաշտպանելու ներկայացուցչություն չուներ, այլ զբաղված էր պետական մարմինների ձևավորմամբ, այդ գործառույթն ամբողջությամբ վարել է եկեղեցին:: Այդ ժամանակահատվածի մի շարք վավերագրեր վկայում են հայոց կաթողիկոսի ունեցած բացառիկ լիազորությունների ու գործառույթների մասին:[2] Համբարձում Առաքելյանը, ով «Մշակ» թերթի խմբագիրն էր, դիմում է Գևորգ Ե կաթողիկոսին, Հայկական հարցի բարձրացման հարցերով հայրապետական հեղինակությունն ու ներկայացուցչությունն օգտագործելու խնդրանքով: Սա ուշագրավ էր նաև այն առումով, որ «Մշակ»-ի խմբագրակազմը շարունակ քննադատել էր եկեղեցական իշխանություններին և վերջում հանգել այն եզրակացության, որ նշյալ ժամանակահատվածում եկեղեցին արտաքին աշխարհում աչքի է ընկնում բարձր հեղինակությամբ և անհրաժեշտ է դա օգտագործել:[3] Սանդրո Բեյբուրդյանի «Վավերագրեր հայոց պատմության» գրքում ականատեսն ենք այն փաստի, որ Էջմիածնի մարտավարության մեջ կարևոր տեղ է զբաղեցրել զինվորական քահանաների գործունեության կանոնակարգմանը նվիրված ծրագիրը: Ըստ այդ կանոնակարգի, քահանաներին պետք է վերապահվեր ոչ միայն հոգևոր բարոյական գործառույթը, այլև դասախոսությունները ազգային-եկեղեցական պատմությունից: Գևորգ Ե կաթողիկոսն այդ կանոնագարկում նպատակադրել էր ամեն հարցով օժանդակել պետությանը պաշտպանական խնդիրներում:[4] Հետաքրքրիր է եկեղեցու ողջույնն Առաջին Հանրապետությանը, որում կարդում ենք. «Հայաստանի Առաքելական մայր եկեղեցին սրբագործում է Միացյալ և ան-

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 6

[2] **Սանդրո Բեյբուրդյան**, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Երևան 1999, էջ 3:

[3] Տ՛ես նույն տեղում, էջ 15:

[4] Նույն տեղում, էջ 73:

կախ Հայաստանի Հանրապետությունը և օրհնում նրա օրինական ու Վեհապետական իշխանությունը, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը երաշխավորում է Մայր Աթոռի և Նորին Վեհափառութեան, Ամենայն Հայոց նրա օրինական ու Վեհապետական իշխանությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Մայր Աթոռի և Նորին Վեհափառության, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախամեծար ու գերիշխան իրավունքները ազգային-եկեղեցական և կրօնաբարոյական խնդիրներում Կաթողիկոսի նախամեծար ու գերիշխան իրավունքները ազգային-եկեղեցական և կրօնաբարոյական խնդիրներում»:[1]

Եկեղեցին ունենում է նաև հսկայական սոցիալական գործունեություն, որը կարևոր էր պետության համար այդ բարդ ժամանակահատվածներում:

Եկեղեցի-պետություն փոխհարաբերություններն այլ բնույթ ու հնչեղություն են ստանում Հայաստանի երկրորդ՝ Խորհրդային Հանրապետությունում: 70 տարի շարունակ խորհրդային իշխանությունները Հայաստանում արմատախիլ էին անում եկեղեցի-պետություն իրավաքաղաքական հարաբերությունների մշակույթը և ծավալում էին հակաեկեղեցական քաղաքականություն: Խորհրդային կարգերի հաստատումով Հայ Առաքելական եկեղեցին ենթարկվեց հալածանքների: Ընդհանուր առմամբ ԽՍՀՄ 70 տարիների ընթացքում վարած քաղաքականությունը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ կարելի է բաժանել երկու փուլի՝

- *Հայաստանի խորհրդայնացումից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը*
- *Երկրորդ աշխարհամարտից մինչև Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումը:*

Առաջին փուլը կործանարար էր եկեղեցի-պետություն իրավաքաղաքական մշակույթի առումով: Երկրորդ փուլում հնարավորություն ստեղծվեց փոքր-ինչ դրական փոփոխություններ կատարել այս ուղղությամբ:

Խորհրդային իշխանության առաջին օրենսդրական ակտերից է 1920թ. հունվարի 20-ի «Խղճի ազատության, եկեղեցական և կրոնական ընկերությունների մասին» դեկրետը, որով վերացվեցին դավանանքի հետ կապված բոլոր արտոնությունները:[2] Խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո Հայ առաքելական եկեղեցին Սահմանադրությամբ անջատվեց պետությունից: Դա վերաբերում էր ինչպես Ռուս Ուղղափառ, այնպես էլ Խորհրդային Միության տարածքում գտնվող բոլոր եկեղեցինե-

---

[1] **Սանդրո Բեյբուրդյան**, նշվ աշխ., էջ 514:

[2] **Արամ սրկ. Մալխասյան**, «Էջեր Խորհրդային կարգերի օրոք Հայ Եկեղեցու և Պետության փոխհարաբերությունների պատմությունից» (ավարտաճառ, անտիպ), Սուրբ Էջմիածին, 2000, էջ 10:

րին, այդ թվում և Հայ առաքելական եկեղեցուն: 1920թ. դպրոցը վերջնականապես բաժանվեց եկեղեցուց, իսկ քիչ ավելի ուշ առգրավվեց եկեղեցական ողջ ունեցվածքը՝ ծիսական սպասքը, թանգարանային նմուշները, ձեռագրական հարստությունը, հողակտորները, քանդվեցին կամ պահեստների ու ախոռների վերածվեցին հարյուրավոր եկեղեցիներ: Բանը հասավ նրան, որ Հայ առաքելական եկեղեցին պետք է հրաժարվեր Եղեռնի զոհերին ապրիլի 24-ին հիշատակելուց[1]:

1920թ. դեկտեմբերի 17-ին Հայհեղկոմն ընդունեց «Դեկրետ հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուրական հիմնարկությունների պետականացման մասին», որով նշված հիմնարկություններն անցան Լուսժողկոմատի տնօրինության ներքո:[2] Նույն թվականի դեկտեմբերի 31-ին Լուսժողկոմատի հրամանով արգելվեց կրոնական առարկաների դասավանդումը և կրոնական ծեսերի կատարումը դպրոցներում: Պետականացվեց էջմիածնի մատենադարանը, իսկ 1920թ. դեկտեմբերի 19-ին բռնագրավվեցին էջմիածնի վանքի շինություններն ու ունեցվածքի մի մասը: 1921թ. նոյեմբերի 17-ի դեկրետով հոգևորականները զրկվում էին ընտրելու և ընտրվելու իրավունքից:[3] Փաստորեն, Խորհրդային Միությունն անտեսելով Հայ Առաքելական եկեղեցու պատմական դերն ու նշանակությունը, որակական նոր հարթության վրա տեխափոխեց պետաեկեղեցական հարաբերությունները, եկեղեցու մեջ, որպես հայ հնագույն պատմական ինստիտուտի, տեսնելով այն կառույցը, որը կարող է վտանգ հանդիսանալ սեփական իշխանության պահպանման և տարածման համար:

1922թ. հունվարի 2-ին հրատարակվեց դեկրետ «Եկեղեցիների և թանգարանային ունեցվածքի բռնագրավման» վերաբերյալ, որը կիրառվեց նույն թվականի մարտից: Դրա համաձայն՝ Հայ առաքելական եկեղեցուց բռնագրավվեց թանգարանային և հոգևոր արժեք ներկայացնող գրեթե ողջ գույքը: 1924թ. հոկտեմբերի 13-ին Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտկոմն օրենք ընդունեց, որի կիրառմամբ Հայ առաքելական եկեղեցին զրկվում է ևս մեկ՝ ազատ գործունեության իրավունքից: Օրենքի կիրառման միջոցով Խորհրդային իշխանությունները ցանկանում էին ամեն կերպ սահմանափակել Հայ առաքելական եկեղեցու իրավունքները՝ պաշտամունքի և այլ կարևոր նպատակների համար ծառայող շենքերի, շինությունների փակման և բռնագրավման ճանապարհով: Ավելին, 1925թ. հունվարի 19-ին ընդունված օրենքով բռնագրավվեցին Գևորգյան

[1] Նույն տեղում:

[2] **Ա. Մանուկյան**, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953, էջ 114, Երևան, 1999:

[3] Հակիրճ Պատմություն Եւ Բացատրություն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2012, էջ 40:

հոգևոր ճեմարանի շենքը, վանքի մատենադարանը, տպարանը, թանգարանը, միաբանական շենքը, էլեկտրական կայանը, շտեմարանը, սեղանատունը, փուռը, Սինոդի շենքը, հյուրանոցը, Ս. Հռիփսիմեի վանքը, Զվարթնոցը, նոր վեհարանը, Ս. Էջմիածնին ենթակա բոլոր այգիները:[1]

1927թ. սպանվում են Խոր Վիրապի վանահայր Տ. Կարապետ վրդ. Աստվածատրյանը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Տ. Գյուտ եպս. Տեր-Ղազարյանը: Այնուհետև համտարած փակվում էին վանքերը, եկեղեցիներն ու ծխական դպրոցները, ձերբակալվում էին հոգևորականները: 1930թ. մահանում է Գևորգ Ե կաթողիկոսը և Հայ Եկեղեցին, զրկվելով իր հոգևոր առաջնորդից, ավելի ծանր կացության առաջ է կանգնում: Կաթողիկոսական տեղապահ է ընտրվում Տ. Խորեն արքեպս. Մուրադբեկյանը: Բոլշևիկներն ամեն կերպ փորձում էին ձախողել կաթողիկոսական ընտրությունները, մինչև իրենց հարմար մի թեկանծու գտնելը: 30-ական թվականների սկզբներին Հայաստանում սկսվում է եկեղեցիների ավերման գործընթացը: Այդ թվականներին Հայաստանում մոտ 800 եկեղեցիներ են փակվել ու վերածվել կոլտնտեսության պահեստների, ակումբների ու գարաժների: 1930թ. պայթեցվում է Նորքի ս. Սիմեոն Ծերունի եկեղեցին, 1931-ին՝ ս. Պողոս-Պետրոս եկեղեցին:[2]

1932թ., մի քանի ձախողումից հետո, մեծ դժվարությամբ թույլատրվում է Ազգային- եկեղեցական ժողով գումարել և կաթողիկոս է ընտրվում Տ.Տ. Խորեն Ա Մուրադբեկյանը (1932-1938): Նորընտիր կաթողիկոսն ամեն կերպ փորձում է վերականգնել Հայ Եկեղեցու հեղինակությունն ու իրավունքները: Նա բողոքներ է ուղղում խորհրդային կառավարությանը, որոնք անպատասխան են մնում: Ընդհակառակը՝ եկեղեցու դեմ սկսվում են ավելի խիստ հալածանքներ, ծավալուն բնույթ էր կրում հակաեկեղեցական քարոզչությունը, որն իրականացնելու համար օգտագործում էին հայ պատմաբաններին:[3]

Բազում հոգևորականների մեղադրում էին Դաշնակցության գաղտնի անդամ լինելու, հակախորհրդային քարոզչության, հոգուտ օտարերկրյա որևէ պետության լրտեսության, «ազգայնամոլական», «տեռորիստական», «ժողովրդի թշնամի» լինելու մեջ: Բողոքներն ու արդարացումներն անպատասխան էին մնում: Հայ հոգևորականության՝ բռնությունների ենթարկված ներկայացուցիչների թիվը միայն Հայաստանում հասել է շուրջ

---

[1] **Վ. Սայադյան**, Կրոնական կազմակերպությունների սահմանադրական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2015, էջ 107:

[2] Հակիրճ Պատմություն և Բացատրություն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2012, էջ 43

[3] Նույն տեղում, էջ 55:

200 մարդու: Գնդակահարվել են Էջմիածնի միաբան հայ բարձրաստիճան հոգևորականներ՝ Բագրատ եպիսկոպոսը, Թադե եպիսկոպոսը, Իսահակ եպիսկոպոսը, Արտակ եպիսկոպոսը, Դանիել վարդապետը են շատ ուրիշներ, ովքեր անհիմն մեղադրանքներով ձերբակալվել էին: Խորեն Ա-ի բողոքներն ամենուր անպատասխան էին մնում, կամ էլ անվտանգության խորհուրդը խաբեությամբ գործը ձգձգում էր:[1]

Իրականացվող քաղաքականությունը վտանգավոր էր հայ ժողովրդի համար, քանի որ սպառնում էր նրա և Եկեղեցու կապի խզմանը, որը կարող էր հանգեցնել հայ ազգային ինքնության վտանգման, քանի որ քրիստոնեությունը համարվում է դրա պահպանման հիմնասյուներից մեկը:

Պետության-եկեղեցի իրավահարաբերությունները փոքր-ինչ կարգավորվեցին 1940 թվականից, երբ Հայ առաքելական եկեղեցին աստիճանաբար սկսեց վերագտնել տարիներ առաջ կորցրած իր դիրքը: Դրան հատկապես նպաստեցին Գևորգ Չորեքչյան կաթողիկոսի ջանքերը: 1941 թվականին Խորհրդային Միությունը ստիպված եղավ փոփոխություններ կատարել երկրի ներքաղաքական կյանքում ժամանակավորապես դադարեցնելով հակաեկեղեցական քաղաքականությունը՝ ժողովրդին միասնական պայքարի առաջնորդելով ընդհանուր թշնամու դեմ:[2]

Փաստորեն Հայ եկեղեցու համար շրջադարձային դարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ աշխարհասփյուռ հայությունն անմիջապես արձագանքեց հայրենիքին օգնելու Սուրբ Էջմիածնի կոչին: Սփյուռքի դրամական օժանդակությամբ ստեղծվեցին տանկային շարասյուներ և ուղարկվեցին ռազմաճակատ: Հայ եկեղեցու ու ժողովրդի այս նախաձեռնությունն աննկատ չմնաց խորհրդային կառավարության կողմից և փոխվեց ոչ միայն Հայաստանի կառավարության, այլև Խորհրդային Միության վերաբերմունքը Մայր Աթոռ ս. Էջմիածնի հանդեպ:[3] 1945թ. Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպս. Չորեքչյանը հանդիպեց Իոսիֆ Ստալինին: Հանդիպումն ունեցավ պատմական նշանակություն: Ստալինը թույլատրեց ազգային-եկեղեցական ժողով գումարել և անցկացնել կաթողիկոսական ընտրություններ, վերաբացել Մայր Աթոռ ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանը, վերադարձնել գրադարանը, տպագրել «Էջմիածին» ամսագիրը, Էջմիածնին վերադարձնել ս. Հռիփսիմե, ս. Գայանե, ս. Գեղարդ և ս. Խոր Վիրապ վանքերը, ինչպես նաև արտասահմանի հայ

---

[1] **Ստեփան Ստեփանյանց,** Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան 1992, էջ, 80- 81:

[2] **Թ. սրկ. Համբարձումյան**, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության իրավական փոխհարաբերությունները, Սուրբ Էջմիածին, 2000, էջ 47:

[3] **Ս. Կերտող** (Ս. Ստեփանյանց), Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994, էջ 140:

հոգևորականներին արտոնվեց Էջմիածին գալ՝ եպիսկոպոսական ձեռնադրության համար: Յոթնամյա ընդմիջումից հետո, 1945թ. Հայ Եկեղեցին կրկին հնարավորություն ունեցավ ընտրել իր հայրապետին և վերսկսել ընդհատված իր գործունեությունը: 1945թ. Ազգային-եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Տ. Գևորգ արքեպս. Չորեքչյանին: Հետպատերազմյան առաջին տարիներին, լսելով Հայոց Հայրապետի կոչը, հայրենադարձվեցին հազարավոր հայորդիներ: Գևորգ Զ կաթողիկոսի ջանքերով, չնայած բոլոր ճնշումներին ու արգելքներին, քիչ թե շատ աշխուժություն տիրեց եկեղեցիներում ու ժողովրդի մեջ, որը սակայն, նոր հալածանքների ու բռնությունների տեղիք տվեց:

Հայ առաքելական եկեղեցին սկսեց զարթոնք ապրել, երբ 1955թ. կաթողիկոսական գահին բազմեց Վազգեն Ա կաթողիկոսը: Ավելացավ հոգևորականության թիվը, վերանորոգվեցին ու կառուցապատվեցին Ս. Էջմիածինը, բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր (Գայանե, Հռիփսիմե, Շողակաթ, Գեղարդավանք, Խոր Վիրապ), վերկանգնվեց կրթությանը ճեմարանում, խորացվեցին հայրենիք-սփյուռք, ինչպես նաև միջեկեղեցական հարաբերությունները: Սա փաստում է այն մասին, որ Խորհրդային Միության կոշտ քաղաքականությունը Մայր Աթոռի և ամբողջ Հայ առաքելական եկեղեցու հանդեպ աստիճանաբար մեղմացավ, որը առիթ հանդիսացավ Հայ առաքելական եկեղեցու համար բռնելու զարգացման և բարգավաճման ուղի:[1]

Վազգեն Ա-ի գահակալության հետագա տարիներին եկեղեցական կյանքը զգալիորեն աշխուժանում է ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլև՝ Սփյուռքում: Հայ եկեղեցին ընդգրկվում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմում, մասնակցում Վատիկանի Բ ժողովին: Հայոց Հայրապետը այցելություններ է կատարում և եղբայրական հանդիպումներ ունենում Քույր Եկեղեցիների պետերի հետ: Վազգեն կաթողիկոսի երկարատև գահակալությունը նշանավորվեց նաև շինարարական աննախընթաց ձեռնարկներով: Հիմնական վերանորոգության ենթարկվեց Մայր Աթոռը՝ իր շրջակա տարածքներով: Քանի որ Խորհրդային կառավարության կողմից արտոնված չէր նոր եկեղեցիներ կառուցելը, Հայրապետի օրհնությամբ սկսվում են վերակառուցվել և սրբագործվել ավերված, փակված ու խոնարհված եկեղեցիները:[2]

---

[1] **Վ. Մայաղյան**, Կրոնական կազմակերպությունների սահմանադրական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2015, էջ 109:

[2] Հակիրճ Պատմություն և Բացատրություն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2012, էջ 47:

Ընդհանուր առմամբ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հիմնահարցի ուսումնասիրությունը Խորհրդային միության տարիներին թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

➢ *Եթե մինչև խորհրդային իշխանության հաստատումը եկեղեցու գործունեությունն ընդգրկում էր պետության կյանքի մի շարք ոլորտները՝ սոցիալական, մշակութային, քաղաքացիակա[1], Խորհրդային Միության գոյության 70 տարիների ընթացքում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հարցը բավականին հակասական էր, քանի որ նախ տարվում էր խիստ ժխտողական քաղաքականություն, այնուհետև չեզոք և զիջումային:*

➢ Փաստորեն ԽՍՀՄ քաղաքականությունը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ ընթանում է երեք ուղղություններով՝

- **ժխտողական**
- **չեզոք**
- **զիջողական:**

Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ եկեղեցի-պետություն փոխհարաբերություններում խորհրդային 70 տարիներն ամենաբարդն ու ճգնաժամայինն են եղել: Մի ամբողջ ժամանակահատված, որն ուղեկցվում էր թե՛ նյութական, թե՛ հոգևոր արժեքների քայքայմամբ ու կործանմամբ: Իրավաքաղաքական համատեքստում կնքված օրենքներն ու ակտերը հիմնականում ունեցել են բացասական, հակաեկեղեցական նշանակություն ու ազդեցություն, ուստի նրանցից ոչ մեկը պատմական, քաղաքական և կամ իրավական արժեք չէր կարող ունենալ հետագա հարաբերությունների զարգացման գործում:

Խորհրդային իշխանությունների կենտրոնացումը Հայ առաքելական եկեղեցու վրա, ինչպես նաև նրանց ծրագրած քաղաքականությունը մի անգամ ևս փաստում է, որ եկեղեցին կարևորագույն և առանցքային ինստիտուտ է եկել Հայոց պետականության ձևավորման ու կայացման բոլոր փուլերում: Խորհրդային իշխանությունները եկեղեցու մեջ տեսնելով սեփական իշխանության ամրապնդման գլխավոր խոչընդոտները, ամեն կերպ փորձում էին չեզոքացնել նրան:

Сирануш Меликян, Отношения Между Армянской Апостольской Церковью И Республикой Армения В Условиях Первой Республики И

[1] Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.). պետականության գոյության կարճ ժամանակահատվածում Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները կարգավորող փաստաթուղթը պառլամենտական-դեմոկրատական կառուցվածք ունեցող ՀՀ-ում «Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև դաշնագիրն» էր, որն այդպես էլ, ըստ էության, գործածության մեջ չմտավ ՀՀ-ում՝ խորհրդային կարգերի հաստատումով: Այդ փաստաթուղթը բաղկացած էր 19 կետից և ընդգրկում էր եկեղեցի-պետություն փոխհարաբերության հիմնական ասպեկտները:

Советского Управления - В данной статье рассматриваются церковно-государственные отношения и вопросы их урегулирования в исторических реалиях Первой Республики Армения и Советской Армении. Основная цель - показать наиболее важные реалии и основы, которые существуют в исторических основах церковно-государственных отношений. Основываясь на определенных фактах и исторических событиях, мы, в частности, изучили ключевые дыры указанного периода, чтобы понять современные реалии государственно-церковных отношений. Ключевые слова - Первая республика, Советская Армения, Церковь, Государство, правовой-политический строй, историческая реальность, период, исторические предпосылки.

Siranush Melikyan, The Relationship Between The Armenian Apostolic Church And The Republic Of Armenia In Terms Of The First Republic Of Armenia And Soviet Governance - In this article are discussesed church-state relations and their settlement issues in the historical realities of the First Republic of Armenia and Soviet Armenia. The main purpose is to show the most important realities and foundations that exist in the historical foundations of the church-state relationship. Based on certain facts and historical events, we have in particular studied the key holes of the above period in order to understand the current realities of state-church relations.

ԺԱՄԱՆԱԿԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՀՈԳԵԳՐԱՄՄԱՆ

ՄԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր - քաղաքական գործիչ, հոգեգրամմա, հասարակական գիտակցություն, արժեքներ, եսակենտրոն տիպ, սոցիոկենտրոն տիպ, դեպի մարդը կողմնորոշվածություն, անձնային առանձնահատկություններ:

Անձը, որպես միջավայրի արդյունք և ծնող, վերջինիս հետ մեկ ամբողջական համակարգ է կազմում: Եվ, համաձայն համակարգի կարևորագույն սկզբունքներից մեկի, մի տարրի փոփոխությունը հանգեցնում է մնացած բոլոր տարրերի փոփոխությանը, միջավայրային փոփոխությունները անմիջականորեն հանգեցնում են անձի ներքին փոփոխությունների:

Այսօր, մեր երկրում տեղի ունեցած և ընթացող իրադարձությունների արդյունքում «ստեղծվում է» նոր տիպի հասարակական անձ՝ իր պահանջներով և հավակնություններով: Իսկ այդ պահանջների ու հավակնությունների, ինչպես նաև ապագայի հանդեպ դիրքորոշումների և մտածական քարտեզների համարժեք իրականացումն ու զարգացումը ապահովում են քաղաքական դեմքերն՝ իրենց վարած քաղաքականությամբ:

Հայաստանում տեղի են ունենում հասարակական գիտակցության, ինչպես նաև արժեքային համակարգի, հասարակական դիրքորոշումների փոփոխություններ, որոնք էլ հանգեցնում են քաղաքական գործչի հոգեբանական կերպարի, առանձնահատկությունների նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխության:

Գոյություն ունեն գործունեության տեսակներ, որոնք հոգեբանական պահանջներ են ներկայացնում իրենով զբաղվող մարդուն: Այսպիսին է նաև քաղաքականությունը, որը բավականին բազմաբնույթ հոգեբանական պահանջներ է ներկայացնում քաղաքական գործչի հոգեկանին:

Մ. Վեբերը, ելնելով քաղաքական վարքագծի շարժառիթներից և նպատակներից, առանձնացնում է անձերի երկու տիպ. ա) քաղաքականության համար ապրողներ և բ) քաղաքականության հաշվին ապրողներ: [1] Քաղաքականության համար ապրողների նպատակն է ծառայել հասարակությանը՝ իրականացնելով հասարակական ակտիվ հարաբերություններ: Իսկ քաղաքականության հաշվին ապրողների գլխավոր նպատակը փառք և հարստություն ունենալն է: Ներկան և ապագան կապվում են արժեքներով: Մինչհեղափոխական Հայաստանում հիմնականում քաղաքականության հաշվին ապրողներն էին գերիշխում, որոնց վարած քա-